

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	5
1.4. Առևտուր	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	9
4. ՓՈԽԱՐԺԵՔ	10
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	11
5.1. Պետական բյուջեի եկամուտները	11
5.2. Բյուջեի ծախսերը	13
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	14
5.4. Կառավարության պարտք	14
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	15
6.1. Գնաճ	15
6.2. Ավանդներ	16
6.3. Վարկեր	17
6.4. Դրամական փոխանցումներ	20
7. ԱՄՓՈՓՈՒՄ	20

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության աճը 2026թ. հունվար-օգոստոս ամիսներին պահպանվել է համեմատաբար բարձր մակարդակում, թեև օգոստոսին դանդաղման միտումը շարունակվել է: 2026թ. օգոստոսին տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) 12-ամսյա աճը կազմել է 5.2%՝ հուլիսի 6.5%-ի դիմաց: Արդյունքում՝ հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճը կազմել է 7.3%՝ հունվար-հուլիսի 7.8%-ի համեմատ նվազելով 0.5 տոկոսային կետով: Ութ ամիսների աճը հիմնականում ապահովվել է ծառայությունների, արդյունաբերության և շինարարության ոլորտների հաշվին:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային¹, %



2026թ. հունվար-օգոստոս ամիսներին տնտեսական ակտիվության 7.3% աճին հիմնական նպաստում ունեցող ճյուղը եղել է ծառայությունների ոլորտը՝ ապահովելով 3.8 տոկոսային կետ նպաստում: Արդյունաբերության նպաստումը կազմել է 1.8 տոկոսային կետ, իսկ շինարարությունը և էական դրական ազդեցություն է ունեցել՝ ապահովելով 1.4 տոկոսային կետ նպաստում: Առևտրի նպաստումը կազմել է 0.3 տոկոսային կետ:


¹ Ամսական ՏԱՑ-ը ներկայացված է սեպտեմբերի 25-ի վերանայված հրապարակմամբ, իսկ մինչև հուլիսի կուտակային կետերը՝ տրամադրված XLS շարքով: Գծապատկերների հին կուտակային կետերը արտացոլում են իրենց աղբյուրների հրապարակման պահի տվյալները:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2026թ. հունվար-օգոստոս ամիսներին, տոկոսային կետ²



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում աճն օգոստոսին փոխարինվել է անկմամբ: 2026թ. օգոստոսին արդյունաբերական արտադրանքի ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 4.3%-ով՝ հուլիսի 3.1% աճի դիմաց: Արդյունքում՝ 2026թ. հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճը կազմել է 7.4%՝ հունվար-հուլիսի 9.5%-ի համեմատ նվազելով 2.1 տոկոսային կետով:

² Նպաստումները գնահատվել են սկզբնական փաստաթղթի մեթոդով՝ տարեկան կշիռների կիրառմամբ և ընդհանուր SUՑ-ին համամասնորեն նորմավորմամբ: Կշիռների հարաբերակցությունը վերականգնվել է հունվար-օգոստոսի նպաստումը համապատասխան ճյուղի աճի տեմպին բաժանելով: Նպաստումները պաշտոնական հրապարակված գնահատականները չեն:

2026թ. հունվար-հուլիս³ ամիսներին արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 9.5%-ով: Աճի հիմնական աղբյուրները եղել են հանքագործական և մշակող արդյունաբերության ճյուղերը, որոնց գնահատված նպաստումներն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել են համապատասխանաբար շուրջ 4.7 և 4.8 տոկոսային կետ: Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման թողարկումն աճել է 26.5%-ով, իսկ մշակող արդյունաբերության թողարկումը՝ 7.2%-ով: «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաոլորտի թողարկումը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ չի փոխվել: «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաոլորտի աճը կազմել է 2.8%, իսկ նպաստումը եղել է գրեթե զրոյական:

Հանքարդյունաբերության բարձր աճը հիմնականում պայմանավորված է եղել մետաղական հանքաքարի արդյունահանման 29.5% աճով, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է շուրջ 4.8 տոկոսային կետ: Միաժամանակ, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերի թողարկումը նվազել է 10.7%-ով՝ որոշակիորեն զսպելով ոլորտի աճը:

Մշակող արդյունաբերության աճին ամենամեծ դրական նպաստումն ունեցել է «հիմնական մետաղների արտադրություն» ենթաճյուղը՝ շուրջ 3.4 տոկոսային կետ, որի թողարկումն աճել է 33.1%-ով: Նշանակալի դրական նպաստումներ են ապահովել նաև սննդամթերքի արտադրությունը՝ շուրջ 1.8 տոկոսային կետ, խմիչքների արտադրությունը՝ 1.6 տոկոսային կետ, և քիմիական նյութերի ու քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ 1.3 տոկոսային կետ: Ընդ որում, քիմիական արտադրանքի թողարկումն աճել է 77.6%-ով: Դրական ազդեցություն են ունեցել նաև կահույքի և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները՝ յուրաքանչյուրը շուրջ 0.6 տոկոսային կետ նպաստմամբ: Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունն աճել է 0.9%-ով՝ ապահովելով շուրջ 0.1 տոկոսային կետ դրական նպաստում:


Այլ խմբավորումներում չներառված արտադրատեսակների արտադրության նպաստումը կազմել է շուրջ 0.1 տոկոսային կետ, այդ թվում՝ ոսկերչական արտադրատեսակների արտադրությունն նվազել է 3.3%-ով:

³ Արդյունաբերության օգոստոսի տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել: Ճյուղային նպաստումները մոտարկվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացիկ գներով, կշիռների և իրական աճի տեմպերի հիման վրա:

Միևնույն ժամանակ, մշակող արդյունաբերության մի շարք ենթադրություններ շարունակել են զսպել ընդհանուր աճը: Առավել նշանակալի բացասական նպաստումներն արձանագրվել են ծխախոտային արտադրատեսակների և այլ խմբավորումներում չներառված մեքենաների ու սարքավորանքի արտադրության ոլորտներում: Դրանց թողարկումները նվազել են համապատասխանաբար 8.9% և 54.6%-ով՝ մշակող արդյունաբերության աճին հակազդելով շուրջ 1.5 և 0.7 տոկոսային կետով: Բացասական ազդեցություն է ունեցել նաև էլեկտրական սարքավորանքի արտադրությունը՝ շուրջ 0.2 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում բարձր աճը պահպանվել է նաև օգոստոսին, ամսական աճի տեմպը որոշակիորեն դանդաղել է: 2026թ. օգոստոսին շինարարության ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 23.8%-ով՝ հուլիսին արձանագրված 26.5% աճի դիմաց: Արդյունքում՝ հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճը կազմել է 24.7%՝ հունվար-հուլիսի 25.0%-ի համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտում օգոստոսին աճը դանդաղել է: 2026թ. օգոստոսին ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 11.4%-ով՝ հուլիսի 16.7% աճի դիմաց: Ամսական աճի դանդաղման պայմաններում հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճը կազմել է 12.8%՝ հունվար-հուլիսի 13.0% ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով:

Հունվար-հուլիս ամիսների տվյալներով⁴ ծառայությունների ոլորտի աճը շարունակել է ձևավորվել ենթաոլորտների լայն շրջանակի դրական դինամիկայի հաշվին: Ընդհանուր աճին առավել մեծ նպաստում են ունեցել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն» և «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտները՝ համապատասխանաբար շուրջ 4.0 և 3.1 տոկոսային կետ նպաստումներով: Էական է եղել նաև «տրանսպորտ» ենթաոլորտի նպաստումը՝ շուրջ 2.3 տոկոսային կետ, իսկ «կազմության և հանրային սննդի կազմակերպում» և «վարչարարական և օժանդակ գործունեություն» ենթաոլորտների նպաստումները կազմել են համապատասխանաբար շուրջ 1.2 և 0.8 տոկոսային կետ: Դրական նպաստում է ապահովել նաև «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն» ենթաոլորտը՝ շուրջ 0.6 տոկոսային կետով: Իսկ կրթության ծառայությունների ծավալը նվազել է 1.0%-ով, սակայն դրա բացասական նպաստումն ընդհանուր ծառայությունների աճին եղել է գրեթե զրոյական:

⁴ Ծառայությունների օգոստոսի տվյալները՝ ըստ ենթաոլորտների, դեռևս չեն հրապարակվել: Նպաստումները մոտարկվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացիկ գներով, կշիռների և իրական աճի տեմպերի հիման վրա:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտում գրանցվել է թույլ դինամիկա նաև օգոստոս ամսին: 2026թ. օգոստոսին առևտրի ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 0.1%-ով՝ հուլիսին գրանցված 0.1% անկման դիմաց: Արդյունքում՝ հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճը կազմել է 0.7%՝ հունվար-հուլիսի 0.8% ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.1 տոկոսային կետով:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ⁵

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը, %



⁵ Արտահանման և ներմուծման ամսական տվյալները վերանայվել են սեպտեմբերի 25-ի հրապարակմամբ: Կուտակային շարքի հունվար-հուլիսի կետերը պահպանված են նախորդ հրապարակման տարբերակով, իսկ հունվար-օգոստոսի կետը վերջին հրապարակումից է:

Արտահանման բացասական դինամիկան օգոստոսին փոխարինվել է թույլ աճով: 2026թ. օգոստոսին արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 1.3%-ով՝ հուլիսի վերանայված 15.2% անկման դիմաց: Արդյունքում՝ **հունվար-օգոստոս ամիսների կուտակային անկումը մեղմվել է՝ կազմելով 6.5%:** Արտահանման դինամիկայի գնահատման տեսանկյունից շարունակում են կարևոր մնալ նաև ՌԴ-ի կողմից հայկական մի շարք ապրանքների նկատմամբ կիրառված սահմանափակումները, այդ թվում՝ հունիսի 12-ից Հայաստանից ծագող և առաքվող ենթակարանտինային արտադրանքի ներմուծման և տարանցման ժամանակավոր սահմանափակումը: Միաժամանակ, օգոստոսին արձանագրված ամսական աճը դեռևս բավարար չի եղել կուտակային բացասական միտումը շրջելու համար:

Հունվար-հուլիս⁶ ամիսների տվյալներով՝ արտահանման նվազումը շարունակել է հիմնականում պայմանավորված լինել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման 54.5% անկմամբ, որի բացասական նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է շուրջ 18.0 տոկոսային կետ: Միաժամանակ, նախորդ ամիսներին բացասական նպաստում ունեցած «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի արտահանման ծավալը հունվար-հուլիսին նվազել է 1.0%-ով, ինչի արդյունքում դրա բացասական նպաստումը կազմել է շուրջ 0.2 տոկոսային կետ:


Արտահանման ընդհանուր անկումը զգալիորեն մեղմվել է «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման 76.6% աճի հաշվին, որի դրական նպաստումը կազմել է շուրջ 10.9 տոկոսային կետ: Դրական նպաստումներ են ապահովել նաև «պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախումբը՝ արտահանման 2.1% աճով և շուրջ 0.3 տոկոսային կետ նպաստմամբ, ինչպես նաև «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը»՝ համապատասխանաբար 10.5% և 0.2 տոկոսային կետ ցուցանիշներով:

Միաժամանակ, ուշադրության է արժանի բուսական ծագման արտադրանքի արտահանման 31.7% անկումը, որի բացասական նպաստումն ընդհանուր արտահանման աճին կազմել է շուրջ 1.3 տոկոսային կետ: Հաշվի առնելով հունիսի 12-ից ՌԴ-ի կողմից Հայաստանից ծագող և առաքվող ենթակարանտինային արտադրանքի ներմուծման և տարանցման նկատմամբ կիրառված ժամանակավոր սահմանափակումը՝ այս դինամիկան կարող է արտացոլել սահմանափակումների

⁶ Արտահանման օգոստոս ամսվա տվյալները՝ ըստ ապրանքատեսակների, դեռևս չեն հրապարակվել:

հնարավոր ազդեցությունը: Այնուամենայնիվ, տվյալ ցուցանիշը վերաբերում է հունվար-հուլիս ամբողջ ժամանակահատվածին և արտահանման բոլոր ուղղություններին, ուստի միայն այս տվյալների հիման վրա հնարավոր չէ առանձնացնել ՌԴ սահմանափակումների ազդեցության չափը:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը, %



Ներմուծման դրական դինամիկան պահպանվել է նաև օգոստոսին, թեև ամսական աճի տեմպը դանդաղել է: 2026թ. օգոստոսին ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 14.9%-ով՝ հուլիսի վերանայված 24.1% աճի դիմաց: Արդյունքում՝ հունվար-օգոստոս ամիսների կուտակային աճը կազմել է 9.3%:

Հունվար-հուլիս ամիսների տվյալներով⁷ ներմուծման աճը հիմնականում ձևավորվել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «պատրաստի սննդի արտադրանք», «հանքահումքային արտադրանք» և «քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք» ապրանքախմբերի հաշվին: Նշված հինգ ապրանքախմբերի ընդհանուր նպաստումը ներմուծման աճին կազմել է շուրջ 17.7 տոկոսային կետ: Առավել մեծ նպաստումն ունեցել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախումբը, որի ներմուծումն աճել է 37.7%-ով՝ ընդհանուր ցուցանիշին նպաստելով շուրջ 7.9 տոկոսային կետով: Դրան հաջորդել են տրանսպորտային միջոցները՝ 3.4, հանքահումքային արտադրանքը՝ 2.6, պատրաստի սննդի արտադրանքը՝ 2.1 և քիմիական արտադրանքը՝ շուրջ 1.7 տոկոսային կետ նպաստումներով:

Նշված ապրանքախմբերում արձանագրված բարձր աճի պայմաններում ընդհանուր ներմուծման աճը զգալիորեն ավելի զուսպ է եղել՝ պայմանավորված

⁷ Ներմուծման օգոստոս ամսվա տվյալները՝ ըստ ապրանքատեսակների դեռևս չեն հրապարակվել:


առանձին խոշոր ապրանքախմբերի ծավալների էական անկմամբ: Մասնավորապես, ներմուծման աճը զգալիորեն զսպվել է «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ծավալների 65.7% անկմամբ, որի բացասական նպաստումը կազմել է շուրջ 12.1 տոկոսային կետ: Բացասական ազդեցություն են ունեցել նաև մանածագործական իրերի, թղթից պատրաստված իրերի և կոշկեղենի ներմուծման կրճատումները՝ համապատասխանաբար 3.2%, 15.4% և 10.7%-ով, սակայն դրանց առանձին նպաստումները համեմատաբար փոքր են եղել՝ շուրջ 0.2, 0.2, 0.1 տոկոսային կետ:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ⁸

2026 թվականի հունվար-հուլիսին անվանական աշխատավարձերի աճի տեմպը համադրելի է եղել նախորդ տարվա համեմատ, սակայն կառուցվածքը փոխվել է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 5.5%-ով՝ 2025 թվականի համապատասխան ժամանակահատվածի 5.7% աճի դիմաց՝ կազմելով 312.2 հազ. դրամ: Պետական հատվածում աշխատավարձերի աճի տեմպը կազմել է 8.9%՝ կազմելով 247.6 հազ. դրամ և նախորդ տարվա համեմատ արագանալով 3.8 տոկոսային կետով, իսկ հունվար-հունիսի համեմատ դանդաղելով 0.2 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, ոչ պետական հատվածում անվանական աշխատավարձի աճը 4.3% է (միջինում կազմելով 336.7 հազ. դրամ)՝ նախորդ ժամանակահատվածի համեմատ գրեթե չփոխվելով, իսկ նախորդ տարվա նույն ամիսների համեմատ դանդաղելով 1.3 տոկոսային կետով: Այսպիսով, ոչ պետական հատվածում արձանագրվել է աշխատավարձերի աճի տեմպի դանդաղում, մինչդեռ պետական հատվածի աշխատավարձերն աճում են բավական բարձր տեմպով:



⁸ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար 2026թ. օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2025-2026թթ. հունվար-հուլիսին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները՝ տարվա սկզբից միջին փոխարժեքի փոփոխությունը (% աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական փոխարժեքը (ՀՀ դրամ)



2026 թվականի օգոստոսին ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ արժևորվել է հիմնական արժույթների նկատմամբ: ԱՄՆ դոլարի

նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել է 365.5 դրամ՝ նախորդ տարվա օգոստոսի համեմատ նվազելով 17.7 դրամով: Եվրոյի նկատմամբ միջին փոխարժեքը կազմել է 423.6 դրամ՝ տարեկան կտրվածքով նվազելով 22.2 դրամով: ՌԴ ռուբլու նկատմամբ միջին փոխարժեքը կազմել է 4.4 դրամ՝ նախորդ տարվա օգոստոսի համեմատ նվազելով 0.4 դրամով: Ընդհանուր առմամբ, 2026 թվականի հունվար-օգոստոսին ՀՀ դրամը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 4.6%-ով, մինչդեռ ՌԴ ռուբլու և եվրոյի նկատմամբ արժեզրկվել է համապատասխանաբար 4.2%-ով և 0.1%-ով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ


5.1. Պետական բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպն օգոստոսին որոշակիորեն դանդաղել է: 2026թ. օգոստոսին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 10.2%-ով՝ հուլիսի 16.3% աճի դիմաց: Արդյունքում՝ հունվար-օգոստոս ամիսներին բյուջեի ընդհանուր եկամուտների կուտակային աճը կազմել է 14.4%՝ հունվար-հուլիսի 14.9%-ի համեմատ դանդաղելով 0.5 տոկոսային կետով:

Եկամուտների աճի հիմնական աղբյուրը շարունակել են մնալ հարկային եկամուտները և պետական տուրքերը, որոնք հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 14.6%-ով՝ ընդհանուր եկամուտների աճին նպաստելով շուրջ 13.8 տոկոսային կետով: Միաժամանակ, ոչ հարկային՝ այլ եկամուտների բացասական դինամիկան որոշակիորեն խորացել է, և դրանց կուտակային անկումը հունվար-հուլիսի 5.9%-ից հունվար-օգոստոսին ավելացել է մինչև 6.5%, իսկ ընդհանուր եկամուտների աճին բացասական նպաստումը կազմել է շուրջ 0.3 տոկոսային կետ:

Պաշտոնական դրամաշնորհների ծավալը ևս զգալիորեն գերազանցել է նախորդ տարվա մակարդակը՝ հունվար-օգոստոսին կազմելով 21.3 մլրդ դրամ՝ 2025թ. նույն ժամանակահատվածի 4.5 մլրդ դրամի դիմաց: Արդյունքում, դրամաշնորհներն աճել են շուրջ 4.7 անգամ և ընդհանուր եկամուտների աճին նպաստել են մոտ 0.9 տոկոսային կետով: Այսպիսով, օգոստոսին եկամուտների աճի որոշակի դանդաղումը պայմանավորված է եղել ինչպես հարկային եկամուտների աճի փոքր դանդաղմամբ, այնպես էլ այլ եկամուտների անկման խորացմամբ:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը, %



Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճին առավել մեծ նպաստում են ունեցել ավելացված արժեքի հարկը և եկամտային հարկը, որոնց մուտքերը 2026թ. հունվար-օգոստոսին աճել են համապատասխանաբար 12.2%-ով և 12.3%-ով՝ ընդհանուր ցուցանիշի աճին նպաստելով 3.9 և 3.3 տոկոսային կետով: Նշանակալի դրական նպաստում է ունեցել նաև շահութահարկը, որի մուտքերն աճել են 11.7%-ով՝ ապահովելով շուրջ 2.0 տոկոսային կետ նպաստում: Բնապահպանական և բնօգտագործման վճարների բարձր՝ 78.7% աճը ընդհանուր ցուցանիշին նպաստել է շուրջ 1.5 տոկոսային կետով, իսկ պետական տուրքերի 40.8% աճի նպաստումը կազմել է շուրջ 1.3 տոկոսային կետ: Դրական նպաստում է ունեցել նաև այլ հարկերի 25.6% աճը՝ շուրջ 0.7 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, մաքսատուրքերի գծով մուտքերը նվազել են 0.6%-ով, սակայն դրանց բացասական ազդեցությունը հարկային եկամուտների ընդհանուր աճի վրա եղել է գրեթե զրոյական:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2025թ. հունվար-օգոստոս		2026թ. հունվար-օգոստոս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	14.3	14.3	14.6	14.6
Ավելացված արժեքի հարկ	23.9	7.1	12.2	3.9
Ակցիզային հարկ	15.5	0.8	11.5	0.6
Շահութահարկ	19.2	3.2	11.7	2.0
Պետական տուրք	16.8	0.5	40.8	1.3
Մաքսատուրք	0.2	0.0	-0.6	0.0

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	-38.6	-1.4	78.7	1.5
Այլ հարկեր	-2.6	-0.1	25.6	0.7
Շրջանառության հարկ	27.8	0.8	16.2	0.5
Եկամտային հարկ	10.0	2.8	12.3	3.3
Սոցիալական վճարումներ	13.3	0.6	14.2	0.6

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերի աճի տեմպն օգոստոսին դանդաղել է: 2026թ. օգոստոսին պետական բյուջեի ընդհանուր ծախսերը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել են 17.6%-ով՝ հուլիսի 20.1% աճի դիմաց՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ ծախսերի բարձր աճով: Արդյունքում՝ հունվար-օգոստոս ամիսներին բյուջեի ծախսերի կուտակային աճն արագացել է՝ կազմելով 9.9%՝ հունվար-հուլիսի 8.9%-ի դիմաց:

Նույն ժամանակահատվածում ընթացիկ ծախսերն աճել են 17.8%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին ունենալով շուրջ 14.6 տոկոսային կետ դրական նպաստում: Միաժամանակ, կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր) շարունակել են մնալ նախորդ տարվա մակարդակից էականորեն ցածր՝ կրճատվելով 25.0%-ով և ընդհանուր ծախսերի աճին հակազդելով շուրջ 4.6 տոկոսային կետով: Այսպիսով, բյուջետային ծախսերի աճը շարունակում է հիմնականում ձևավորվել ընթացիկ ծախսերի հաշվին, մինչդեռ կապիտալ ծախսերի ցածր կատարողականը շարունակում է զսպել ընդհանուր ծախսերի աճը:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը/պակասուրդը (-), մլրդ դրամ




Պետական բյուջեն հունվար-օգոստոս ամիսներին պահպանել է հավելուրդային դիրքը, թեև հավելուրդի չափը շարունակել է նվազել: 2026թ. հունվար-օգոստոս ամիսներին եկամուտների և ծախսերի վերոնշյալ դինամիկայի պայմաններում ձևավորվել է պետական բյուջեի՝ շուրջ 17.7 մլրդ դրամ հավելուրդ՝ հունվար-հուլիսի 32.8 մլրդ դրամի դիմաց: Այսպիսով, օգոստոսի ընթացքում կուտակային հավելուրդը նվազել է շուրջ 15.1 մլրդ դրամով: Միաժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում պետական բյուջեն եղել է պակասուրդային՝ շուրջ 60.7 մլրդ դրամի չափով, ինչի համեմատ 2026թ. բյուջետային հաշվեկշիռը շարունակում է մնալ էականորեն ավելի բարենպաստ:

5.4. Կառավարության պարտք

ՀՀ կառավարության պարտքի ծավալը շարունակել է աճել նաև օգոստոսին: 2026թ. օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ կառավարության պարտքի ծավալը կազմել է 14.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ հուլիսի համեմատ աճելով 163.1 մլն ԱՄՆ դոլարով: Ներքին պարտքը (արտահայտված ՀՀ դրամով) կազմել է 2,732.9 մլրդ դրամ, իսկ արտաքին պարտքը (արտահայտված ԱՄՆ դոլարով)՝ 6.7 մլրդ դոլար: Օգոստոսի վերջի դրությամբ կառավարության պարտքը նախորդ տարվա օգոստոսի համեմատ աճել է 5.2%-ով, ընդ որում՝ ներքին պարտքը նվազել է 1.5%-ով, իսկ արտաքին պարտքը՝ աճել է 7.2%-ով:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %




Պետական գանձապետական պարտատոմսերի տոկոսադրույքների նվազումը շարունակվել է: 2026թ. օգոստոսին պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը կազմել է 6.6%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 1.4 տոկոսային կետով, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 0.1 տոկոսային կետով: Օգոստոսին թողարկվել են նաև միջնաժամկետ պարտատոմսեր, որոնց եկամտաբերությունը կազմել է 7.5%՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազելով 2.2 տոկոսային կետով: Երկարաժամկետ պարտատոմսերի վերջին՝ հուլիսի եկամտաբերությունը կազմել է 8.6%:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %



Գնաճի տեմպն օգոստոսին որոշակիորեն դանդաղել է, սակայն պահպանվում է ԿԲ թիրախից վերև: 2026թ. օգոստոսին 12-ամսյա գնաճը կազմել է 4.4%՝ հուլիսի 4.5%-ի դիմաց, նվազելով 0.1 տոկոսային կետով: Չնայած դանդաղմանը՝ գնաճը շարունակում է մնալ Կենտրոնական բանկի $3\pm 1\%$ թիրախային միջակայքի վերին սահմանից բարձր, սակայն հուլիսին արձանագրված առավել բարձր մակարդակի համեմատ գնաճային ճնշումները որոշակիորեն մեղմվել են: Այնուամենայնիվ, ՀՀ կենտրոնական բանկը 2026թ. սեպտեմբերին բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 6.75% մակարդակում:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



Ավանդների աճի տեմպն օգոստոսին դանդաղել է: 2026 թվականի օգոստոսին ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 22.4%-ով՝ հուլիսի 23.5%-ի դիմաց: Աճը հիմնականում պայմանավորվել է ռեզիդենտներից ներգրավված ավանդների 27.8% աճով: Միաժամանակ, զգալիորեն դանդաղել է ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների աճը՝ կազմելով 4.2%:

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2026թ. օգոստոսին ավանդների աճն առավելապես պայմանավորված է եղել տնային տնտեսություններից ներգրավված ավանդների ավելացմամբ, որի նպաստումը կազմել է շուրջ 11.9 տոկոսային կետ: Նշանակալի դրական նպաստումներ են ունեցել նաև ձեռնարկություններից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված ավանդները՝ համապատասխանաբար շուրջ 4.6 և 4.3 տոկոսային կետով: Միաժամանակ, էականորեն նվազել է ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների նպաստումը՝ հուլիսի շուրջ 3.7 տոկոսային կետից օգոստոսին կազմելով 1.0 տոկոսային կետ, ինչը ևս պայմանավորվել է ավանդների ընդհանուր աճի դանդաղմամբ: Շահույթ չհետապնդող կազմակերպություններից ներգրավված ավանդների նպաստումը կազմել է շուրջ 0.8 տոկոսային կետ:


6.3. Վարկեր

Վարկերի աճի տեմպն օգոստոսին փոքր-ինչ արագացել է՝ պահպանվելով բարձր մակարդակում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2026թ. օգոստոսին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 24.9%-ով՝ հուլիսի 24.7%-ի դիմաց: Աճը պայմանավորված է եղել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ավելացմամբ, որոնք տարեկան կտրվածքով աճել են համապատասխանաբար 22.7%-ով և 91.9%-ով: Ընդ որում, ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի չափազանց բարձր աճին զգալիորեն նպաստել է նաև նախորդ տարվա օգոստոսի՝ համեմատաբար ցածր բազան, երբ դրանց ծավալը տարեկան կտրվածքով նվազել էր 3.6%-ով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի կազմում ինչպես իրավաբանական անձանց, այնպես էլ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի աճի տեմպերն օգոստոսին պահպանվել են բարձր մակարդակներում՝ կազմելով համապատասխանաբար 23.4% և 22.0%: Ընդհանուր ռեզիդենտների վարկերի 22.7% աճին դրանց նպաստումները կազմել են համապատասխանաբար շուրջ 11.9 և 10.8 տոկոսային կետ: Այսպիսով, իրավաբանական անձանց վարկերի աճի տեմպը հուլիսի համեմատ փոքր-ինչ դանդաղել է, իսկ տնային տնտեսությունների վարկերի աճը փոքր-ինչ արագացել է:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված միջոցների աճին, տոկոսային կետ⁹




2026թ. օգոստոսին տնտեսության հիմնական ուղղություններին տրամադրված միջոցների աճերը շարունակել են պահպանվել բարձր մակարդակում: Ռեզիդենտներին տրամադրված միջոցների աճին առավել մեծ նպաստում է ունեցել ծառայությունների ոլորտին տրամադրված միջոցների ավելացումը՝ շուրջ 7.6 տոկոսային կետ, իսկ դրա նպաստումը հուլիսի համեմատ գրեթե չի փոխվել: Բարձր է մնացել նաև սպառողական վարկերի նպաստումը՝ կազմելով 5.9 տոկոսային կետ: Նշանակալի դրական նպաստումներ են ունեցել հիպոթեքային և շինարարության ոլորտին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 4.0 և 3.1 տոկոսային կետով: Առևտրի, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներին տրամադրված միջոցների նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.8, 1.3 և 0.3 տոկոսային կետ, իսկ այլ ճյուղերի նպաստումը՝ շուրջ 1.1 տոկոսային կետ: Այսպիսով, վարկային աճը շարունակում է առավելապես կենտրոնացած մնալ ծառայությունների, սպառողական և հիպոթեքային վարկավորման ուղղություններում:

⁹ Ճյուղային շարքն ընդգրկում է ռեզիդենտներին տրամադրված վարկերը, ավանդները, ֆակտորինգը, լիզինգը և ռեպո համաձայնագրերը, իսկ ըստ ռեզիդենտության շարքը՝ բանկային վարկերը: Այդ պատճառով դրանց աճի տեմպերը տարբերվում են:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների ներհոսքը, արտահոսքը և զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի կուտակային աճը հուլիսին ավելի է արագացել: 2026թ. հուլիսին դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 490.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հուլիսի 129.0 մլն ԱՄՆ դոլարի դիմաց՝ շուրջ 3.8 անգամ ավելի, ընդ որում՝ հունիսի 292.5 մլն ԱՄՆ դոլարի համեմատ ամսական զուտ ներհոսքը զգալիորեն ավելացել է: Արդյունքում՝ 2026թ. հունվար-հուլիս ամիսներին զուտ ներհոսքը կազմել է շուրջ 1.87 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի շուրջ 716.6 մլն ԱՄՆ դոլարի դիմաց՝ աճելով շուրջ 2.61 անգամ կամ 160.6%-ով (հունվար-հունիսի կուտակային աճը կազմել էր 134.4%): Այս զարգացումը հիմնականում պայմանավորված է դրամական միջոցների ներհոսքի զգալի՝ 36.0% աճով, մինչդեռ արտահոսքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է ընդամենը 1.3%-ով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճը 2026թ. հունվար-օգոստոս ամիսներին բարձր մակարդակում է, սակայն վերջին ամիսներին նկատվում է դրա աստիճանական դանդաղում և աճի կառուցվածքի անհավասարակշռության վատթարացում: Հունվար-օգոստոսի կուտակային աճը կազմել է 7.3%: Ութ ամիսների աճը հիմնականում ապահովվել է ծառայությունների,

¹⁰ Ներկայացված են ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով: 2026թ. օգոստոս ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

արդյունաբերության և շինարարության ոլորտների հաշվին: Միաժամանակ, ծառայությունների և շինարարության բարձր աճի պայմաններում արդյունաբերությունում օգոստոսին անկում է գրանցվել, իսկ առևտրի աճը մնացել է գրեթե զրոյական: Արտաքին առևտրի դինամիկան, կապիտալ ծախսերի կրճատումը և գնաճի՝ թիրախային միջակայքից բարձր մակարդակը ևս վկայում են, որ բարձր ընթացիկ աճը չի վերածվում հավասարակշռված և երկարաժամկետ կայուն աճի: Կարևոր է ոչ միայն աճի տեմպի պահպանումը, այլև դրա կառուցվածքի և որակի բարելավումը:

2. Արտաքին առևտրում արտահանման և ներմուծման կուտակային դինամիկան շարունակում է շարժվել հակադիր ուղղություններով: Օգոստոսին արտահանման տարեկան անկումը փոխարինվել է 1.3% աճով, իսկ հունվար-օգոստոսի կուտակային անկումը կազմել է 6.5%: Միաժամանակ, ներմուծման աճն օգոստոսին կազմել է 14.9%, իսկ կուտակային աճը՝ 9.3%: Այս տարբերությունը մեծացնում է արտաքին առևտրային հաշվեկշռի վատթարացման ճնշումը: Հատկանշական է հունվար-հուլիսին բուսական ծագման արտադրանքի արտահանման գծով գրանցված 31.7% անկումը, որը կարող է արտացոլել նաև ՌԴ-ի կողմից հունիսից կիրառված սահմանափակումների հնարավոր ազդեցությունը:

3. Հարկաբյուջետային հատվածում ծախսերի կառուցվածքը մտահոգիչ է: 2026թ. հունվար-օգոստոսին ընթացիկ ծախսերն աճել են 17.8%-ով, մինչդեռ կապիտալ ծախսերը նվազել են 25.0%-ով: Կապիտալ ծախսերի նվազումը շարունակում է սահմանափակել բյուջետային ներդրումների միջոցով տնտեսության պոտենցիալի զարգացման հնարավորությունները:

4. Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքի կուտակային աճն արագացել է: Դրամական փոխանցումների զուտ ներհոսքը դարձել է ներքին պահանջարկին և արժութային շուկային աջակցող լրացուցիչ գործոն: 2026թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների զուտ ներհոսքը կազմել է շուրջ 1.87 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 716.6 մլն ԱՄՆ դոլարի դիմաց՝ աճելով 2.61 անգամ կամ 160.6%-ով: Դրամական ներհոսքի աճի պայմաններում ՀՀ դրամը շարունակում է արժևորվել ԱՄՆ դոլարի նկատմամբ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան [ակտիվ հղման](#) տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: